ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ» ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՓՈԽՏՆՕՐԵՆ ՍՈՆԱ ԱՅՎԱԶՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

12-Ա

ք. Երևան 25 ապրիլի, 2014թ.

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը՝ կազմով՝ Ա. Շուշյան (նախագահի տեղակալ), Լ. Պետրոսյան, Ա. Խուդավերդյան, Ա. Սարգսյան (անդամներ) (այսուհետ՝ Հանձնաժողով) «Հանրային ծառայության մասին» ՀՀ Օրենքի 44-րդ հոդվածի հիման վրա քննարկեց «Թրանսփարենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի փոխտնօրեն Սոնա Այվազյանի (այսուհետ՝ Դիմող) դիմումը ՀՀ բնապահպանության նախարար Արամ Հարությունյանի կողմից էթիկայի կանոնների խախտման վերաբերյալ:

Մասնավորապես, դիմումում նշված է, որ 2014թ. մարտի 25-ից մինչև 26-ը «Պատասխանատու հանքարդյունաբերություն, մարտահրավերներ և հնարավորություններ» թեմայով անցկացվել է միջազգային կոնֆերանս, որի ընթացքում տեղի է ունեցել միջադեպ բնապահպանական ակտիվիստների և ՀՀ բնապահպանության նախարար Արամ Հարությունյանի միջև: Ակցիայի մասնակիցներից Ապրես Զոհրաբյանը մեջբերում է արել ՀՀ բնապահպանության նախարարարության նախկին աշխատակցի ֆեյսբուքյան գրառումից, որում ՀՀ բնապահպանության նախարարությունը որակվել է որպես «գերեզմանոց», ինչին ի պատասխան ՀՀ բնապահպանության նախարարը սպառնացել է ակտվիստին՝ ասելով. «Չափդ ճանաչի, ականջներդ կպոկեմ, կտամ ձեռքդ, լակոտ»:

Դիմողը գտնում է, որ «...ՀՀ բնապահպանության նախարար Արամ Հարությունյանի կողմից վիրավորանք պարունակող արտահայտություններ և սպառնալիքներ թույլ տալը բարձրաստիճան պաշտոնատար անձ հանդիսացող հանրային ծառայողին վայել վարքագիծ չէ և համարվում է էթիկայի կանոնների կոպիտ խախտում, որպիսի պարագայում վտանգվում է նաև հարգանքի և վստահության ձևավորումը նրա ներկայացած մարմնի նկատմամբ»:

Միաժամանակ, Դիմողը, վերլուծելով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի դրույթն առ այն, որ էթիկայի կանոնների խախտման վերաբերյալ էթիկայի հանձնաժողովը վարույթ կարող է հարուցել որևէ անձի դիմումի հիման վրա, եզրահանգում է, որ «որևէ անձ» եզրույթը վերաբերվում է ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձի, ով տեղյակ է կամ ում հայտնի են պաշտոնատար անձի կողմից էթիկայի կանոնների խախտման դեպքերը՝ խնդրելով Հանձնաժողովին հարուցել վարույթ և քննության առնել ՀՀ բնապահպանության նախարարի կողմից էթիկայի կանոնների խախտման հարցը:

Համաձայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի՝ Հանձնաժողովը էթիկայի կանոնների խախտումների վերաբերյալ կարող է վարույթ հարուցել երեք դեպքերում.

1) որևէ անձի դիմումի հիման վրա,

2) իր նախաձեռնությամբ,

3) բարձրաստիճան պաշտոնատար անձի դիմումի հիման վրա՝ իր կողմից էթիկայի կանոնների խախտման հարցը ստուգելու հարցով:

Հանձնաժողովն իր նախկին որոշումներում պարզաբանել է անձի դիմումի հիման վրա Հանձնաժողովում էթիկայի կանոնների խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու որոշ առանձնահատկություններ: Մասնավորապես, 03.05.2013թ. «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցի դիմումում բարձրացված հարցերի վերաբերյալ» թիվ 7-Ա որոշմամբ հաստատված եզրակացության 2-րդ բաժնի 15-18-րդ կետերում Հանձնաժողովն արդեն իսկ ներկայացրել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«Հաշվի առնելով էթիկայի կանոնների ընդհանուր համակարգի առանձնահատկությունները և նրբությունները կոնկրետ անձի կամ անձանց խմբի նկատմամբ էթիկայի կանոնների խախտման հարցեր քննարկելու համար տվյալ անձի կամ անձանց խմբի դիմումի հիման վրա վարույթ հարուցելը պետք է դառնա էթիկայի կանոնների խախտման վերաբերյալ հարցերի քննարկման հիմնական միջոցը:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածը սահմանում է հանրային ծառայողի և բարձրաստիճան պաշտոնատար անձի էթիկայի կանոնները: Միջազգային փորձը և ընդունված պրակտիկան ցույց են տալիս, որ էթիկայի կանոնների համապարփակ և բոլոր հնարավոր իրավիճակները

ներառող մեկնաբանություն գոյություն չունի: Էթիկայի կանոնների ցանկացած կոնկրետ դեպք ուսումնասիրվում է տվյալ դեպքին առնչվող փաստերի համատեքստում և ընդունվում է որոշում, որը կարող է կիրառելի չլինել նույնիսկ փաստական հանգամանքներով շատ մոտ այլ դեպքերի նկատմամբ:

Ակնհայտ է, որ նման դեպքերի վերաբերյալ անհնար է օբյեկտիվ կարծիք կազմել առանց հաշվի առնելու տվյալ դրվագի բոլոր փաստական հանգամանքները, տեղի ունեցած դեպքի կամ ասված խոսքի համատեքստը, երբեմն նաև տվյալ իրավիճակում ներգրավված անձանց անձնական հարաբերությունները, տարիքը, սեռը և այլն: Որևէ արտահայտություն կամ ժեստ, որևէ կոնկրետ անձի կամ անձանց խմբի նկատմամբ անհարգալից վերաբերմունք որակելու համար անհրաժեշտ է նաև հաշվի առնել տվյալ անձի կամ անձանց խմբի սեփական ընկալումը, նրանց միջև առկա անձնական հարաբերությունները կամ այլ հանգամանքները, որոնց առկայության կամ բացակայության պայմաններում դրանք կարող են նաև չընկալվել որպես անհարգալից վերաբերմունք:

Այն դեպքերում երբ խոսքը վերաբերում է պաշտոնատար անձի կողմից էթիկայի կանոնների խախտումներին, որոնք ուղղված են կոնկրետ անձի կամ անձանց խմբի, Հանձնաժողովը չի կարող վարույթ հարուցել, քանի դեռ չի ստացել կոնկրետ անձից կամ անձանց խմբից կոնկրետ դեպքին վերաբերող դիմում: Դիմումում պետք է նշված լինի դիմումի համար հիմք հանդիսացող կոնկրետ իրավիճակը, դիմողի առնչությունը տվյալ դեպքին, այն դրույթը, որը դիմողի կարծիքով խախտել է կոնկրետ բարձրաստիճան պաշտոնատար անձը, ինչպես նաև դիմումին պետք է կցված լինի ձեռքի տակ եղած, դիմումը հիմնավորող ցանկացած նյութ»:

Հետևաբար, որևէ անձի դիմումի հիման վրա վարույթ հարուցելու համար անհրաժեշտ է այն անձի կամ անձանց խմբի դիմումը, որին ուղղված են պաշտոնատար անձի գործողությունները:

Դիմողը Հանձնաժողովի կողմից դիմումի վարույթը ընդունելու անհրաժեշտությունը հիմնավորել է ՀՀ ԱԺ-ի էթիկայի հանձնաժողովի 21.02.2013թ. «Մեծամասնական ընտրակարգով թիվ 13 ընտրատարածքից ընտրված Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Միհեր Սեդրակյանի կողմից պատգամավորի էթիկայի կանոնը խախտելու վերաբերյալ» թիվ N է-1/13 որոշման վկայակոչմամբ:

Այս առնչությամբ Հանձնաժողովը հայտնում է, որ ընդհանուր կամ հանրային շահի նկատառումներից ելնելով այլ անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն իրականացնելը կամ հայց ներկայացնելու համընդհանուր իրավունքը (actio popularis) լայն ճանաչում չունի: Տարբեր մարմինների՝ ըստ անձանց շրջանակի իրավազորության հաստատումն ինքնավար գործընթաց է, պայմանավորված է կարգավորումների առանձնահատկություններով և մոտեցումների համընկնումը պարտադիր չէ:

Մյուս կողմից, Դիմողը չի ներկայացրել Հանձնաժողովի՝ անձի դիմումի հիման վրա վարույթ հարուցելու առնչությամբ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշման փոփոխման անհրաժեշտությունը հիմնավորող ծանրակշիռ փաստարկներ և հիմքեր: Նման փաստարկների և հիմքերի բացակայության պարագայում դիրքորոշումների վերանայումը կկրի կամայական բնույթ՝ վտանգելով իրավական որոշակիության սկզբունքը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ «Թրանսփարենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի փոխտնօրեն Սոնա Այվազյանի դիմումը չի համապատասխանում վերը նշված պայմաններին: Մասնավորապես, դիմումը վերաբերում է կոնկրետ բարձրաստիճան պաշտոնատար անձի կողմից կոնկրետ անձի նկատմամբ թույլ տրված էթիկայի կանոնների խախտմանը հարցի քննարկմանը, առկա չէ այն անձի դիմումը, ում իրավունքները ենթադրաբար խախտվել են տվյալ գործողության արդյունքում, և «Թրանսփարենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի փոխտնօրեն Սոնա Այվազյանը հանդես չի գալիս այդ անձի անունից:

Միաժամանակ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ Հանձնաժողովը կարող է էթիկայի կանոնների խախտման վերաբերյալ վարույթ հարուցել սեփական նախաձեռնությամբ: Այս առումով Հանձնաժողովը գտնում է, որ օրենսդիրը նշված դրույթով Հանձնաժողովի համար սահմանել է հստակ հայեցողություն առանց որևէ անձի դիմումի առկայության, սեփական նախաձեռնությամբ էթիկայի կանոնների խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու համար:

Սեփական հայեցողությամբ վարույթ հարուցելու առանձնահատկություններին Հանձնաժողովն անդրադարձել է 03.05.2013թ. «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցի դիմումում բարձրացված հարցերի վերաբերյալ» թիվ 7-Ա որոշմամբ հաստատված եզրակացության 2-րդ բաժնում, որտեղ նշվել է, որ Հանձնաժողովի նախաձեռնությամբ վարույթ հարուցելու հայեցողությունը անհրաժեշտ է դիտել որպես բացառիկ դեպքերում օգտագործվող միջոց: Ընդ որում, Հանձնաժողովը մատնանշել է, որ որպես բացառիկ դեպքեր կարող են համարվել հասարակական լայն շերտերին վերաբերող, համակարգային բնույթ ունեցող էթիկայի կանոնների խախտումները, հասարակական մեծ հնչեղությունը, միանգամից մեծ թվով մարդկանց նկատմամբ էթիկայի կանոնների խախտումներ թույլ տալու դեպքերը, կամ այն դեպքերը, երբ անձը, օբյեկտիվ պատճառներից ելնելով, ինքը չի կարող անձամբ դիմել Հանձնաժողովին:

Հանձնաժողովը դիտարկում է, որ վերջին ամիսներին ավելացել են քաղաքացի-պաշտոնատար անձ շփումներում պաշտոնատար անձանց կողմից ենթադրյալ անհարգալից վերաբերմունքի կամ անվայել պահվածի վերաբերյալ մամուլի հրապարակումները: Բացի այդ, սույն դեպքում գործ ունենք

բազմադրվագ միջադեպի հետ, որը կատարվել է հասարակական վայրում, հանրային հետաքրքրություն ներկայացնող զգայուն հարցի քննարկումների շրջանակում, որպիսի պարագայում Հանձնաժողովն իր նախաձեռնությամբ անհրաժեշտ է համարում հարուցել վարույթ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդված 2-րդ մասի 2-րդ կետով.

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. ՀՀ բնապահպանության նախարարի պաշտոնակատար Արամ Հարությունյանի կողմից էթիկայի կանոնների խախտման հարցը քննարկելու նպատակով հարուցել վարույթ:

2. Առաջարկել ՀՀ բնապահպանության նախարարի պաշտոնակատար Արամ Հարությունյանին, սույն որոշումը ստանալուց հետո տասնօրյա ժամկետում, ներկայացնել քննարկվող հարցի վերաբերյալ իր առարկությունները և բացատրությունները:

Հանձնաժողովի նախագահի տեղակալ ***Ա.Շուշյան***